

Ջերմուկի համայնքի ղեկավարի 2013 թ.
նոյեմբերի 1 -ի N 106 -Ա որոշման

Հ Ա Յ Տ Ա Բ Ա Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանը հայտարարում է մրցույթ աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետի (համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախումբ, պաշտոնի ծածկագիր 3.1-13) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

հիմնական գործառույթների համառոտ բնութագիրը

Առաջատար մասնագետը ֆինանսական բաժնի պետի հանձնարարությամբ՝

ա/ իրականացնում է համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց աղբահանության տեղական վճարների գանձումները. բ/ մասնակցում է համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց աղբահանության տեղական վճարների տեղեկատվական շտեմարանի գրանցման, ճշգրտման և վարման աշխատանքներին.

գ/ ըստ անհրաժեշտության կազմում է աղբահանության վճարների հաշվարկման ու գանձման հաշվետվություններ, վերլուծություններ ու տեղեկանքներ.

դ/ ուսումնասիրում է աղբահանության վճարների վճարումների հաշվարկման ու դրանց գանձումների վերաբերյալ գանգատներն ու դիմումները, արդյունքների մասին զեկուցում բաժնի պետին, ներկայացնում առաջարկություններ,

ե/ աղբահանության վճարների հարցերով դիմած քաղաքացիներին ապահովում է անհրաժեշտ խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ.

զ/ իրականացնում է իր գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, գրավոր առաջարկությունների, եզրակացությունների ու այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

է/ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակմանը.

ը/ հանձնարարականների՝ համապատասխան ժամկետներում կատարման ընթացքի ն արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

թ/ իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում ու բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ,

միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ. ժ/ վարում է համայնքի կառավարման

տեղեկատվական համակարգի բնակչության ռեգիստրը: ի/մասնակցում է համայնքի

զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին,

նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում զինապարտների

վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակչության վայրի հաշվառումից հանելու,

աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները,

պատասխանատվություն է կրում դրանց հավաստիության համար լ/առաջատար մասնագետն ունի

օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ /սոցիալական երաշխիքներ/ և

կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ /սահմանափակումներ/:

ներկայացվող պահանջները

Առաջատար մասնագետը՝

ա/ ունի առնվազն միջնակարգ կրթություն

բ/ ունի ՀՀ Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Տեղական տուրքերի ու վճարների մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Ձինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի «Նախագորակոչային, գորակոչային տարիքի և պահեստագորայինների զինվորական հաշվառման կարգը հաստատելու մասին» N 282 որոշման, աշխատակազմի կանոնադրության ու աշխատակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Մրցույթը կանցկացվի 2013 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 11.00-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի շենքում: Հասցեն՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փ. 8.

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ):

Դիմող քաղաքացիները Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմ կամ Վայոց ձորի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձիք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար 3 * 4 չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձիք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013 թվականի նոյեմբերի 20 -ի ժամը 18.00-ը:

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ Հեռախոս՝ 0287– 2-13-07